



## Հակոբ Պարոնյան

### Քաղաքավարության վնասները

Բռնաւոր մը կայ, որ գեղեցիկ անուան տակ ծածկուած՝ զմեզ գերութեան կը դատապարտէ նոյնիսկ այն առանձնաշնորհմանց մէջ, զորս մեր կամքն կը շնորհէ մեզ եւ որոց չհակառակիր օրէնքն: Այս բռնաւորը բնութեան ալ կը հակառակի եւ թոյլ չտար անոր, որ ազատ համարձակ գործէ մարդ էակին վրայ: Այս բռնաւորը քաղաքավարութիւնն է: Այս բռնաւորին հակառակորդներն անկիրթ կ'անուանուին յանիրաւի:

Այս քաղաքավարութիւնն քաշուելու բան չէ մանաւանդ անոնց համար, որ կը սիրեն եւ տրամադրութիւն ունին բնութեան օրինաց հետեւիլ եւ այս ընթացքով երջանկութիւն գտնել: Հասկցնելու համար, թէ որչափ կը չարչարուին, կը հարստահարուին այս խեղճերն, արժան կը դատենք քանի մ'օրինակներ մէջ բերել:

Բարեկամներէդ մէկուն անուան տօնախմբութեան ներկայ գտնուիլ կը փափաքիս: Ընթրելէն յետոյ կ'ելնես, բարեկամիդ տունը կ'երթաս, ուր սիրալիւր ընդունելութիւն մը կը գտնես: Մէկ ժամու չափ նստելէն ետքը աչքերդ կը սկսին գոցուիլ, եւ կ'ուզես բազմոցի վրայ ընկողմանիլ: Քաղաքավարութիւնը կ'արգիլէ: Ախորժակով ընթրած ըլլալով՝ գօտիդ քիչ մը թուցնելու կամ քակելու պէտքը կը զգաս: Հրաւիրելոց առջեւ ասանկ պէտք մը զգալն հակառակ է քաղաքավարութեան: Քունը երթալով կը ծանրանայ արտեւանացդ վրայ: Բազմութեան մէջ եկող քունն անկիրթին մեծն է, վանել հարկ է այդ քունը: Բնութիւնը քնացի՛ր կ'ըսէ, քաղաքավարութիւնը մի՛ քնանար կը պոռայ:

Փորձե՛ք եւ քիչ մը քնացի՛ր:

Տան տէրը գլխուդ վրան կը տնկուի:

Ինձի նայեցե՛ք, կը պոռայ սպասատրներուն, քիչ մը ջուր բերե՛ք Պապիկ աղային:

Չէ, չէ, չեն ուզեր ջուր:

Ինչո՞ւ կը քնանաք, Պապիկ աղայ:

Նստած տեղս քունս եկաւ, ներեցե՛ք:

Մեզմէ չախորժեցար:

Քաւ լիցի:

Ուրիշներուն տունը մինչեւ ամառու կը նստիս, մեր տունը շուտ մը կը քնանաք:

Շատ կերայ այս գիշեր, այդ պատճառաւ...

Ոչ աս է, ոչ ան, կ'ըսէ տան տիկինը, մեր տունն աղէկ գբօսում չկայ անոր համար...

Կ'աղաչեմ, մի՛ խօսիք այդպէս:

Ուրիշ տուն մը գտնուիք նէ, հարկաւ ա՛լ աւելի պիտի գբօսնուիք եւ գուարճանայիք:

Միկարայ մը բերէք Պապիկ աղային, կը հրամայէ տան տէրը:

Խնձոր մը ըստկեցէք Պապիկ աղային, կը հրամայէ տան տիկինը:

Շնորհակալ եմ:

Խաւով մ'եփեցե՛ք:

Թէյ մը բերե՛ք:

Ելի՛ր, սանկ քիչ մը պտտէ, Պապիկ աղայ, որ քունդ փախչի:

Եկո՛ւր, սքանալի մը խաղանք, որ չքնանաս, կը պոռայ անդիւն ուրիշ մը:

Շնորհակալ եմ, դուք քեյֆերնո՞ւ նայեցէք:

Չըլլար, սքանալի մը պիտի խաղամ քեզի հետ:

Պապիկ աղան չկրնար դիմադրել: Կը սկսի սքանալի խաղալ: Հագիւ կը խաղայ երեք քառորդ, եւ ահա քունն վերստին կու գայ:

Մի՛ քնանար, Պապիկ աղայ:

Չեմ քնանար կոր:

Կը քնանաս կոր, Պապիկ աղայ:

Չեմ քնանար կոր:

Եթէ կ'ուզես, բոլբայ մը պարէ՛, որ քունդ փախչի:

Բոլբայ չեմ գիտեր:

Կը սորվիս:

Թող տուէք զիս, Աստուածնիդ սիրէք նէ, անդիի սենեակը կ'երթամ, կը քնանամ քիչ մը:

Անկարելի բան է: Տօնախմբութեան մէջ կը քնացուի՞:

Բռնութեամբ պարի կը հանեն Պապիկ աղան, որ մտքէն իրարու ետեւէ կը շարէ այն խօսքերը, զորս բարկութիւնն արտասանել կու տայ մեզ նմանօրինակ պարագայից մէջ:

Պարը կը վերջանայ: Պապիկ աղային քունը կը փախչի:

Մէկ երկու ժամէն հրաիրեալները ոտք կ'ելնեն մեկնելու համար: Պապիկ

աղան ալ կ'ելնէ տուն կը դառնայ: Անկողին կը մտնէ, չկրնար քնանալ. քունն անդառնալի կերպով փախած է: Կ'ելնէ անկողինէն, քիչ մը կը կարդայ, որ քունը գայ, չգար. ուրիշ քնաբեր գիրք մը կ'առնէ. հնար չէ քնանալ նոյնիսկ եթէ...

Օրուան կեանքը կարդայ: Այսպէս Պապիկ աղան մինչեւ առտու կը տապալակի անկողնոյն մէջ եւ կը սկսի այն ատեն քնանալ, որ ամէն մարդ կ'արթննայ եւ գործի կ'երթայ:

Ահաւասիկ քաղաքավարութեան արդիւնքը:

Թող չերթար, էֆենտիմ, թող տունը նստէր, պիտի առարկուի մեզ:

Միթէ մարդս իւր տան մէջ աւելի՞ ազատ է:

Փորձենք:

Իրիկունը տունդ կը դառնաս, հագուստներդ կը հանես եւ գիշերազգեստդ կը հագնիս եւ սենեակիդ մէկ անկիւնը կը քաշուիս, կը նստիս: Քիչ մը կ'անցնի, կերակուրի սեղանը կը դրուի: Կինդ, հայրդ, մայրդ, զաւակներդ, եղբայրներդ, քոյրերդ, թոռներդ կ'առնես եւ վար կ'իջնաս ընթրելու: Սեղանէն կ'ելնես, խահուէղ կը խմես եւ սանկ կ'երկննաս բազմոցիդ վրայ:

Չաթ, չաթ, չաթ...

Վա՛սայ... հի՞ւր է արդեօք...

Չաթ, չաթ, չաթ...

Ո՞վ մտիկ պիտի ընէ ասոնք, նա... ըսէք որ հոս չեմ...

Չըլլար, պատուիհանէն տեսան:

Չաթ, չաթ, չաթ...

Վերը տարէ՛ք եւ ըսէք, որ Պապիկ աղան անհանգիստ է այսօր:

Չաթ... չաթ...

Դուռը կը բացուի:

Վեր հրամանեցէ՛ք, վեր հրամանեցէ՛ք:

Հիւրերը վեր կ'ելնեն:

Պապիկ աղան վստահ է ալ, թէ փորձանքն անցուց:

Կէս ժամ կ'անցնի, չանցնիր, Պապիկ աղային դուռը կը բացուի, եւ հիւրերէն մին ներս կը մտնէ:

Պապիկ աղայ:

.....

Չայն չկայ, արդեօք կը քնանա՞յ կոր... Պապիկ աղա՛յ...

.....

Կը քնանայ կոր:

Պապիկ աղան արթուն է:

Արթնցնենք... Պապիկ աղայ, Պապիկ աղայ... ըսելով հանդերձ կը հրէ, կը հրմշտկէ Պապիկ աղան, որ արթննայ:

Պապիկ աղային ճարը կը հատնի, կ'արթննայ:

Դո՞ւք էք, մոսիո Բոլ:

Ես եմ... անցած ըլլայ:

Շնորհակալ եմ:

Տիկինն ըսաւ, թէ անհանգիստ էք:

Այո՛, շատ անհանգիստ եմ:

Թէ գլխու ցաւ ունիք:

Այո՛:

Ես ալ ըսի, որ երթամ, նայիմ անգամ մը Պապիկ աղան, վերջը չըսէ, թէ մեր տունն եկեր է ու չէ ուզեր քովս գալ:

Շնորհակալ եմ:

Ի՞նչպէս եղաւ, որ գլխու ցաւ ունեցաք:

Իրաւ որ չեմ գիտեր... ա՛հ, չեմ կրնար գլուխս բռնել... կ'աղաչեմ, վեր գացէ՛ք դուք, ինձի համար անհանգիստ մի՛ ըլլաք, քիչ մը քնանամ նէ, կ'անցնի:

Չէ, Էֆենտիմ, չէ, քնանալով չանցնիր: Էնքսէիդ քեօքը քիչ մը հարտալ պտտցնենք. սա հարտալը բերէ՛ք:

Չեմ ուզեր բարեկամ:

Դուն չիյտե՛ս. սա հարտալը բերէ՛ք...

Հարտալը կը բերեն... Մոսիո Բոլ Էնքսէին քեօքը կը դնէ հարտալը:

Քիչ մ'ալ լիմոն բերէ՛ք:

Թող մնայ, ճանըմ:

Քիչ մը լիմոն բերէ՛ք: Հիւանդին խօսքը մտիկ չըլլուիր:

Լիմոնը կը բերեն եւ ճակտին վրայ կը պահեն...

Քիչ մը թոմ բերէ՛ք:

Բոմը ի՞նչ պիտի ընես:

Բերէ՛ք քիչ մը թոմ, շո՛ւտ եղէք:

Թող մնայ, քուզում, պապամ, թող մնայ պէ՛, ո՛ւնիք...

Շուտ ըրէք, թոնր բերէ՛ք:

Բոն կը բերուի: Մոսիո Բոլ թոնով կը շփէ Պապիկ աղային գլուխը:

Անցա՞ւ քիչ մը ցաւը:

Ո՛չ:

Բախը բերէք. թախը... շուտ...

Չեմ ուզեր, մոսիո Բոլ, ճիշերս...

Բախը... կրակին մէջ տաքցուցէք...

Տաքցուցինք...

Պապիկ աղայ, շոգին քթիդ քաշէ՛:

Քաշեցի:

Թեթեւցա՞ւ քիչ մը ցաւը:

Ո՛չ:

Ջուր տաքցուցէք... ոտքերը մէջը դրէք...

Չէ, ճանրմ...

Ջուր պաղեցուցէք... գլուխը մէջը դրէք...

Անցաւ, մոսիո Բոլ, անցաւ...

Չանցնի պիտի տէ, ինչ պիտի ընէ, ինձի մոսիո Բոլ կ'ըսեն...

Կեցիր, հագուիմ, ու վեր երթանք:

Աղէկ որ եկայ:

Շնորհակալ եմ:

Եթէ չի գայի, մինչեւ առտու պիտի քաշէի՞ր այս ցաւը:

Այո՛:

Եւ պիտի ըսէիր, թէ մոսիո Բոլը քովս չեկա՞ւ:

Այո՛:

Շո՛ւտ ըրէ, հագուէ՛ ուրեմն:

Հիմա՛:

Պապիկ աղան կը հագուի ու վեր կ'ելնէ:

Օ՛ոօ, Պապիկ աղայ, անցած ըլլայ:

Անցած ըլլայ, Պապիկ աղայ:

Ի՞նչպէս էք, Պապիկ աղայ:

Շնորհակալ եմ:

Այս գիշեր ձեզի անհանգիստ ըրինք:

Ընդհակառակն, գլխուս ցաւն անցաւ:

Խօսեցէ՛ք, նայինք, Պապիկ աղայ:

Պապիկ աղայ հակառակ իւր կամաց՝ կը սկսի խօսիլ:

Հիւրերը կը նստին այնչափ, որչափ որ պէտք է Պապիկ աղային քունը հեռու հալածելու համար, եւ կը մեկնին:



Պապիկ աղան բաժնուած իւր քունէն՝ մինչեւ առտու հիւրերն անիծելով կը տքնի:

Ի՞նչ ընէ այս մարդն:

Ի՞նչպէս կեանք վարէ քաղաքավարութեան այս գոհն:

Շարունակենք:

Պապիկ աղան ստիպողական գործ մ'ունի եւ կը ստիպուի մէկ կողմէ գործին վազել եւ միւս կողմէ պանիր ու հաց ուտել փողոցի մէջ:

Քաղաքավարութիւնը կ'արգիլէ փողոցի մէջ անօթենալը: Կ'ուզէ բարեկամի մը խանութը մտնել եւ հոն ճաշել իւր պանիրն ու հացը:

Քաղաքավարութիւնը միշտ կը պոռայ, թէ բարեկամի մը խանութը ճաշարան չէ:

Պապիկ աղան խօսք տուած է մէկուն. ժամադիր եղած է մէկու մը հետ:

Թող անօթի երթայ ժամադրութեան տեղը, կ'ըսէ քաղաքավարութիւնը:

Պապիկ աղան կը հնազանդի: Նոյն օրն անօթի կ'անցունէ եւ իրիկուան տուն կը դառնայ թեթեւ տկարութեամբ:

Այս ապաշխարանքին փոխարէն մարդկութիւնն ի՞նչ վարձատրութիւն կ'ընէ Պապիկ աղային, որ քաղաքավարութեան դէմ չմեղանչելու համար օր մը ծոմ պահեց: Ոչինչ: Ո՞վ իմացաւ Պապիկ աղային այս գոհողութիւնն: Ո՛չ որ: Բայց Աստուած չընէ, եթէ փողոցն ուտելով քայլէր, ո՛րքան խօսքեր պիտի լսուէին...

Իմացա՞ք Պապիկ աղային ըրածը:

Վաճառականի մը կը վայլէ՞, եղբայր:

Իւր վարկը կոտրեց, մե՛ղք, բիացայի վրայ 20. 000 ոսկոյ վարկ ունէր:

Քիչ մը համբերէր թող, փաթլամիշ չպիտի ըլլար եա՛'...

\*\*\*

Թորոս աղան առաւօտուն տունէն կ'ելնէ բեռնատրեալ այն  
յանձնարարութիւններով, զորս կ'ինն ընդհանրապէս կ'ընէ էրկան, եւ որոնց  
գործադրութիւնն միմիայն դրամով կ'ըլլայ:

Թորոս աղայ դրամ չունի եւ սակայն իւր տիկնոջ յանձնարարութիւնները  
կատարելու փափաք ունի:

Դժուարութիւն չկայ Թորոս աղային կացութիւնը գուշակելու:

Շուկան չգացած՝ զբօսարան կ'երթայ ըստ իւր սովորութեան առաւօտեան  
խահուէն խմելու համար: Զբօսարանի մէջ կան ուրիշներ ալ, որ կը խօսին այլ եւ  
այլ նիւթոց վրայ: Թորոս աղան իւր սիկարը կը պլորէ եւ խահուէ մը կ'ապսպրէ:

Ա'հ, Թորոս աղայ, կը պոռայ զբօսարանի մէկ անկիւնը նստող մարդուն մէկը,  
քովս եկուր, քովս եկուր, նայինք:

Թորոս աղան մտմտալու բաներ ունի, գոնէ ժամ մ'առանձին մնալու պէտք ունի,  
ուստի քիչ մը կը վարանի բարեկամի հրաւերն ընդունելու:

Թորոս աղայի խահուէն հոս բերէ՛ք, կը պոռայ Ստեփաննոս աղան (այս է  
անկիւնը նստողին անունը):

Թորոս աղան բարեկամին քովը կ'երթայ, հակառակ իւր կամաց, բոլորովին  
մտազբաղ:

Ի՞նչպէս էք, Թորոս աղայ, ի՞նչպէս ժամանակ կ'անցուցէք, նայինք:

Սանկ, նանկ:

Գիտէ՞ք՝ մեր վարած կեանքն ինչի կը նմանի, կեցէք, ձեզի պզտիկ առակ մը  
պատմեմ:

Ստեփաննոս աղան կը սկսի երկար պատմութիւն մը, զոր երբեմն երբեմն  
կ'ընդմիջէ՝ Թորոս աղային ուշադիր ունկնդրութիւնը հրաւիրելու համար, մինչդեռ

Թորոս աղան մտածութեանց մէջ թաղուած՝ կը խորհի, թէ ուր դիմել հարկ է պզտիկ փոխառութիւն մընելու եւ անով իր տղայոց կօշիկ, գլխարկ մայրենի լեզու գնելու եւ դպրոցին թոշակը վճարելու համար:

Պատմութեան ընթացքին մէջ Թորոս աղան տասն անգամ ոտքի կ'ելլէ երթալու համար. Ստեփաննոս աղան օձիքէն կը բռնէ եւ թող չտար՝ ըսելով, թէ պատմութիւնն հետաքրքրաշարժ է, եւ եզրակացութիւնն սքանչելի:

Վերջապէս երկու ժամ խօսելէն ետքը Ստեփաննոս աղան կը հասնի եզրակացութեան, այսինքն երեսփոխանաց ոմանց ատենաբանութեան ատենեաց երկիրն, եւ կը կնքէ իւր պատմութիւնն ըսելով. «Ահա մեր վարած կեանքն այս անասունին կեանքին կը նմանի». եւ պատմութիւնն լնցելուն պէս՝

Ծօ՛ տղայ, սա տոմինոն բեր, կ'ըսէ:

Ինձի հրաման տուէք, որ երթամ:

Չէ, չէ, կ'աղաչեմ, բարթի մը տոմինոյ խաղանք. կէտուակէ՞ս առնենք քարերը, թէ՞ քաշենք. քաշելն աղէկ չէ:

Գործ ունիմ, երթամ պիտի:

Նստէ, պէ՛ մարդ, էնֆիէ մը քաշէ՛, նայիմ սրկեց:

Ժամանակ չունիմ նստելու, արդէն ուշ ալ մնացի:

Ծօ՛, սա տոմինոն բեր, ըսի, չիմացա՞ր, խո՞ւլ ես, ի՞նչ ես:

Մնաք բարով:

Թող չեմ տար, այսօր գործի պիտի չերթամ ես, դուն ալ մի՛ երթար, ժամանակ կ'անցունենք հոս:

Չէ, ճա՛նքմ, գործի օր է, չեմ կրնար նստիլ:

Խօսքս կոտրե՞ս պիտի:

Թորոս աղայ, դուն ալ երկար ըրիր ա', այսչափ նազ չեն ըներ, նստէ՛ կ'ըսեն կոր նէ, կը նստին, կ'ըսեն հոն գտնուողներէն մէկ երկուքը:

Գործ ունիմ, էֆենտիմ, գործ:

Բարեկամաց ալ խաթրը կը սեպեն քիչ մը, էֆենտիմ, խաթրը իշին չիյ թաւութ ենիր:

Թորոս աղային ճարը կը հատնի եւ կը ստիպուի հպատակիլ հասարակաց կարծեաց:

Տոմինոն կը բերեն: Թորոս աղան կարելի եղածին չափ շուտ կը խաղայ, որ ժամ առաջ խալսի այս փորձանքէն: Ստեփաննոս աղան մէկ քար դնելուն մէջ-մէկ պատմութիւն կ'ընէ, մերթ անցած պատրիարքաց վրայ, երբեմն Սահմանադրութեան վրայ եւ միշտ ազգային լրագրութեան վրայ, այնպէս որ Թորոս աղան ժամերով կը սպասէ, որ կարգն իրեն գայ խաղալու:

Կրնամ երեւակայել, թէ ինչ կը զգայ Թորոս աղան, ես որ այս տողերը գրած ժամանակս հազար անգամ արթոյիս վրայ կը ցատկեմ:

Թորոս աղան ինքզինքը կ'ուտէ: Ստեփաննոս աղան կը զարմանայ Թորոս աղային աճապարելուն վրայ:

Ժամ ու կէս կը տեւէ տոմինոն. Ստեփաննոս աղան կը կորսընցնէ խաղը:

Է՛յ, Թորոս աղայ, ռախիները եկան, բարթի մ'ալ խաղանք:

Ոտքդ պագնեմ, Ստեփաննոս աղայ, կ'աղաչեմ, զօռ մի ըներ, չօլուխ չոճուխի տէր եմ ես:

Ատա՛մ, Աստուած ողորմած է, տիւշեշը իմ քովս է... ահա դրի...

Խօսք չեմ կրնար կոր հասկցնել, ժամանակ չունիմ կ'ըսեմ կոր, էֆենտիմ:

Շեշպեշըդ դիր նայիմ:

Տէր ողորմեա, Տէր Աստուած, մեղայ:

Ժամանակ չունիմ կ'ըսես կոր, ժամանակ կ'անցունես կոր. մինչեւ հիմա լմնցուցած էինք խաղը... շեշպեշըդ դիր:

Ես պիտի երթամ... մնաք բարով:

Գնա պէ, ատա՛մ, գնա՛, առտւոյնէ ի վեր ես պիտի երթամ, ես պիտի երթամ, ես պիտի երթամ, գնա՛, գնա՛:

Բարկանալու իրաւունք չունիք, կարծեմ:

Ատանկ բաներ կ'ըսես կոր քի, մարդը կը ճաթեցնես կոր, էֆենտիմ, մենք քեզի աս տեղ գինճիրով կապած չենք ա՛, աս մերեթը երկու բարթի կը խաղան, սովորութիւնն ասանկ է. չպիտի խաղայիր նէ, հիշ թող չխաղայիր. ամէն բան օրէնք մ'ունի. կանոն մ'ունի. րախիները կը խմեն ու չեն փախչիր ա՛, աֆ կ'ընես ամա, ըրածնիդ քիչ մը չվայլեր:

Պէ ճանըմ, փոխանորդ մը ձգեմ, երթամ:

Ասոր աս տեղը պատրիարքարան չէ...

Բարթի մ'ալ, քարթի մ'ալ, Թորոս աղայ, կը կրկնեն քովը նստողները:

Թորոս աղան կը գիշանի՝ հազար անգամ գոջալով գբօսարան մտած ըլլալուն վրայ:

Այս անգամ Թորոս աղան կը յաղթուի: Յաղթանակը տանողին իբր մրցանակ օղի մը կը հրամցնէ եւ կը պատրաստուի երթալու:

Էնֆիէ մը չե՞ս քաշեր, Թորոս աղայ:

Մեծաւ հաճութեամբ:

Պոլիս պիտի իջնաք, այնպէս չէ՞:

Այո՛:

Ետի գուլէ պիտի երթա՞ք:

Ոչ, շուկայ պիտի երթամ:

Պիտի աղաչէի ձեզի, որ Եւրոպայէն եկած Էնֆիեյէն ինձի կէս օխայ առնէիք.  
քանի փարայ է նէ, վերջը կու տամ:

Աղէկ, բայց...

Բայց գիտէ՞ք, ուսկից պիտի առնէք. Ղալաթա Մոմխանէ մէկը կայ, հոն գացէք,  
Ստեփաննոս աղայի համար է՝ ըսէք, իմ ենֆիեյէն թող տայ, նայէ, որ չխաբուիս:

Թորոս աղան քսակը փող մ'անգամ չունի, ուրիշ ձեռով մը կ'ուզէ հասկցնել այդ  
հրամանին անգործադրելիութիւնը, ուստի՝

Ներեցէք, կ'ըսէ, այսօր չեմ կարող այդ կողմերն անցնիլ:

Ատա՛մ, քառասուն տարին անգամ մը բան մը աղաչեցի, ան ալ չես կատարեր.  
դուն բնատրութիւնդ բոլորովին փոխած ես, պամպաշխայ բան մը եղեր ես:

Կը ցաւիմ որ...

Գոնէ Քում-քաբու իջիր ու եկենիս ըսէ, որ ան առնէ ու քեզի տայ, որ բերես. բայց  
ստակը դուն տուր, եկենիս քով պելքի ստակ չգտնուիր:

Ժամն արդէն ութ եղաւ, Թորոս աղայ, կ'ըսէ ուրիշ մը, առնողն առաւ, ծախողը  
ծախեց, ասկեց ետքը երթաս, ի՞նչ պիտի ընես. եկուր քեզի հետ բարթի մը թաւու  
խաղանք:

Աս աւելի աղէկ կ'ըլլայ կը յարէ Ստեփաննոս աղան:

Ո՛չ, ո՛չ, պէտք է որ երթամ, կ'ըսէ Թորոս աղան եւ զքօսարանէն դուրս կը նետէ  
ինքզինքն երթալու համար... շուկա՞յ, ո՛չ, առանձին տեղ մը գտնելու եւ քիչ մը  
հայիոյելու համար. «Մշակ»-ի խմբագրատունն գոնէ մօտ ըլլար...

\*\*\*

Շաբաթ օր է, պիտի ածիլուի Գասպար աղան:

Սափրիչի մը խանութը կ'երթայ:

Սանկ շուտ մը կ'ածիլեն՝ս ինձի եւ մագերս ալ կը կտրեն՝ս:

Ինչո՞ւ չէ:

Գասպար աղան կը նստի աթոռին վրայ:

Սափրիչն ատենական գործողութիւնները կատարելէն ետքը կը սապոնէ իւր նոր յաճախորդն եւ կը դիմէ իւր գէնքերուն:

Քեզի սա կ'աղաչեմ, որ ածելիդ սուր ըլլայ, որովհետեւ իմ մօրուքս քիչ մը սերթ է, վերջը դուն ալ կը չարչարուիս, ես ալ:

Հանգիստ եղէք, կը պատասխանէ սափրիչն՝ սուր ածելի մը ընտրելու երեւոյթն ունենալով:

Գիտնալու էք, որ բերտահ ալ չեմ ուզեր. սանկ վրայէն թեթեւ կերպով անցնելու, ձգելու է:

Ճանըմ, հոգ մ'ընէ՛ք, սափրիչ կայ, սափրիչ ալ կայ, կ'ըսէ սափրիչն եւ ածելիով սպառագիւնեալ կը մօտենայ Գասպար աղային:

Շատ աղէկ:

Գլուխդ սանկ դիր, նայիմ:

Դրինք:

Գործողութիւնը կը սկսի, որուն անմիջապէս կը յաջորդէ արիւնհեղութիւնը:

Կտրեցիր, եղբայրս, կամաց ըրէ քիչ մը:

Պզտիկ չիպան մը կար հոն, ան արիւնեցաւ. չօլբայ պերպերին թրաշ եղեր ես:

Ասդին ալ կտրուեցաւ:

Հոն ալ մագը ծուռ բուսեր էր. անանկ պերպեր մ'ունիս եղեր որ...

Ծնօտիս վրա՞ն հապա...

Ծնօտդ կերկի բռնեցիր տէ, անկից եղաւ: Մի՛ վախնար դուն, ես զանոնք հիմա քիչ մը բամբակով կը թխմեմ:

Վազ անցայ, պապա՛մ, հոգիս ցաւեցաւ, երեսս կրակի պէս կ'էրի կոր:

Սանկ թեթեւ բերտահ մ'ընեմ ու երեսդ անուշահոտ քացախով լուամ նէ, կ'անցնի, բան չմնար:

Չեմ ուզեր բերտահ, չեմ ուզեր, լմնցո՛ւր:

Առանց բերտահի չըլլար:

Ճանըմ, գլուխն իմս չէ՞ մի:

Գլուխդ քուկդ է, բայց ամէն խանութ պատիւ մ'ունի, ածիլուելու մագեր կան տակաւին երեսիդ վրայ ասդին անդին: Ասանկ ձգելն մեզի անպատուութիւն է: Դուն սանկ դիր գլուխդ եւ հանգիստ եղիր:

Պէ՛ ճանըմ, զօռ ով գիս տանջե՞լ կ'ուզես, ի՞նչ ըսել է աս, ես քու խաղալի՞քդ եմ, պատիւդ պաշտպանելու համար իմ երե՞սս ընտրեցիր ասպարէզ. դահիճի պէս գլուխս տնկուեր, կեցեր ես:

Բարկացած կ'երեւաք կոր, անոր համար չեմ ուզեր պատասխանել. միայն կ'աղաչեմ, որ քիչ մը համբերէք, ու լմնցնենք սա գործը:

Սափրիչը կը յաջողի նստեցնել Գասպար աղան, որ գլուխն սափրիչին տրամադրութեան տակ դրած՝ անոր ածելիին քերթուածներուն վանկերը կը համրէ ակռաները սխմելով: Բայց վերջապէս համբերութիւնը կը հատնի եւ



յանկարծ աթոռէն կը ցատկէ՝

Հերիք պէ, մա՛րդ, հերիք, արեան մէջ ձգեցիր երեսս՝ ըսելով:

Լմնցաւ, լմնցաւ, կը պատասխանէ սափրիչն եւ պարզ ջուրով կը լուայ Գասպար աղային երեսը:

Էո՛Ֆ, Էո՛Ֆ...

Տես, դադրեցաւ արիւնը, չորս տեղէն միայն կը բխի կոր, ան ալ քիչ մը բուտրայով կ'անցունենք հիմա:

Ըրէ՛, եղբայր, ինչ որ պիտի ընես, լմնցուր. պիթտիմ պէ ատա՛մ, պիթտիմ:

Չեմ ուրանայ, թէ մօրուքդ քիչ մը սերթ է:

Առաջուց ըսինք ձեզի, Էֆենտիմ:

Սափրիչն իւր բոլոր ուժն կը սպառէ բրնձի փոշիով դադրեցնել արիւնահեղութիւնը եւ չյաջողիր:

Հարիւր տրամի մօտ արիւնս հանեցիր, պէ ատա՛մ:

Ծօ՛, սա շիշէն տուր:

Աշակերտը սրուակ մը կը բերէ. պարունակութիւնն դժոխային քարէ պատրաստուած բաղադրութիւն մ'ըլլալու էր, որովհետեւ ամէն անգամ, որ փետուրի մը ծայրով կը քսէր այն ջուրէն Գասպար աղային երեսը, Գասպար աղան դժոխային ցաւեր կը զգար եւ վեր-վեր կը ցատկէր:

Ահա լմնցաւ, սիրտդ հանգիստ ըլլայ, ըսաւ սափրիչը Գասպար աղային՝ սրուակն աշակերտին դարձնելով:

Շնորհակալ եմ, շնորհակալ եմ, պատասխանեց Գասպար աղան:

Հիմա մազերդ:

Չէ, չէ, չեն ուզեր, մագերս թող մնան՝ ըսելն, հինգնոց մը նետելն ու դուրս ելնելն մէկ ըրաւ Գասպար աղան:

Այս չափ ալ արքի մարդ բնաւ տեսած չունիմ, մրմռաց ինքն իրեն սափրիչը:

Իսկ Գասպար աղան ինքզինքն փողոցի մէջ գտնելուն պէս հառաչեց ու ողբաց սապէս.

Աս ի՞նչ թոհաֆ աշխարհ է, գլուխնուս պիլէ տէր չենք կրնար կոր ըլլալ...

\*\*\*

Խոնարհութիւն կայ, խոնարհութիւն ալ կայ:

Են մարդիկ, որ բարձրանալու եւ ուրիշներն խոնարհեցնելու համար խոնարհութիւնը գործիք ըրած են իրենց:

Կան մարդիկ, որ խոնարհութեան կը դիմեն՝ հարիւրին քսան զեղջելու համար իրենց պարտքէն:

Յաճախ պատահած են այնպիսի մարդոց, որ խոնարհութեան ապաւինած են իրենց մէկ բարեկամը կողոպտելու համար:

Կը գտնուին նաեւ մարդիկ, որ խոնարհութեան մէջ գտած են մարդ խաբելու ամենէն դիւրին միջոցը:

Սակաւք են, որ խոնարհ կ'ըլլան՝ խոնարհ ըլլալու համար:

Սպասելով որ մեր Բարոյական ախտաբանութիւնը, որուն կը վայլէ ճառել այս նիւթին վրայ, ընդարձակօրէն խօսի այն անձանց վրայ, որք խոնարհութիւնն խանութ ըրած են իրենց, անցնինք այսօր ներկայացնել անձ մը, որ կը խոնարհի բարձրանալու նպատակով միայն:

Սրբոյն Թադէոսի եւ Բարթողիմէոսի տօնախմբութենէն քանի մ'օր ետքը Յակոբոս աղայ իւր Բարթողիմէոս անուն մէկ բարեկամին այցելութիւն կ'ընէ՝

շնորհատրութեան պարտքը կատարելու համար:

Ընդունելութեան սենեակն, ուր առաջնորդուած էր Յակոբոս աղան, պզտիկ էր: Արդէն այժմու ընդունելութեան բոլոր սենեակները պզտիկ են, վասնզի քիչ ծախքով կը կահաւորուին: Այս սենեակն ունէր պատշգամ մը, որ հագիւ կրնար տանիլ երկու մարդ, անկեան երկու բազմոցներ, ուր երկ-երկու մարդ միայն կրնային նստիլ, եւ վեց հատ աթոռ: Բազմոցները բեռնաւորուած էին, երբ ներս մտաւ Յակոբոս աղան: Տան տէրն հրաւիրեց Յակոբոս աղան պատշգամը նստիլ, եւ Յակոբոս աղան ընդունեց հրաւերն եւ գնաց բազմիլ պատշգամը: Յաւելունք ըսել, թէ Յակոբոս աղան անանկ մարդ մ'է, որ ուր քաշես, կ'երթայ. կեղծ մերժումներէն, արուեստակեալ յարգանքներէն չախտրժիր. մէկ խօսքով՝ պարզ մարդ մ'է. այսինքն այն մարդերէն է, զոր կը պաշտեն ես: Աւուր պատշաճի քանի մը խօսքեր փոխանակուելէն յետոյ հիւրերուն եւ տան տիկնոջ մէջտեղ՝ սենեակին դուռը բացուեցաւ:

Հրամանեցէ՛ք, Էֆենտի, ըսաւ տան տիկինն՝ ոտք ելնելով եւ իրար անցնելով:

Էֆենտին խոնարհութեամբ բարեւեց հիւրերն եւ դռանը մօտ դրուած, այսինքն երրորդ եւ վերջին, աթոռին վրայ նստաւ:

Տէր ողորմեա, ի՞նչ կ'ընէք, Էֆենտի, սանկ վեր հրամանեցէք, ըսաւ տանտիկինը:

Չէ, չէ, հոս հանգիստ եմ:

Չըլլար, վեր հրամանեցէ՛ք:

Կը խնդրեմ, տիկին, վնաս չունի, հոս աւելի հանգիստ եմ:

Բազմոցի հիւրերն եւ Յակոբոս աղան իրենց քովն առնել կ'ուզեն Էֆենտին, որ կը մերժէ:

Իրաւ որ սա չեղաւ, չվայլեց... խաթերս համար սա պատշգամը անցի՛ր:

Հրամանեցէ՛ք, կ'ըսէ Յակոբոս աղան ոտք ելնելով:

Չեմ ուզեր, նստեցե՛ք:

Յակոբոս աղան կը նստի:

Ըրածդ իրաւ որ չվայլեր, Էֆենտի, աթոռին վրայ անհանգիստ ես, սա պատշգամբ  
հանգիստ է, տես ի՞նչ աղէկ է:

Յակոբոս աղան կը կանգնի նորէն:

Չեմ ուզեր:

Յակոբոս աղան դարձեալ կը նստի:

Չէք ուզեր, բայց նստեցե՛ք՝ ինչ աղուոր է, ծովն ալ կ'առնէ:

Յակոբոս աղան նորէն ոտք կ'ելնէ:

Ինչո՞ւ կը ստիպէք, տիկի՛ն:

Յակոբոս աղան նորէն կը նստի:

Ես պատշգամբ նստիմ նէ, բնաւ չեմ նեղանար. նաւեր, շոգենաւեր կու գան,  
կ'անցնին, ձկնորսները ձուկ կ'որսան, շատ աղէկ է. ոտքդ պագնեմ, քուզում  
Էֆենտի, քիչ մը նստէ:

Յակոբոս աղան վերստին կը կանգնի:

Կը խնդրեմ, տիկի՛ն:

Կ'աղաչեմ:

Մի՛ թախանձէք:

Խաթերս համար:

Հարկ չկայ:

Ոտքդ պագնեմ:

Տէր ողորմեա:

Արեւդ սիրեմ:

( Տակաւին Յակոբոս աղան ոտքին վրայ է:)

Չէ ըսինք ա':

Չէ մի' ըսեր, տես ինչ աղուոր է:

Գիտեմ:

Շոգենաւները...

Տեսած եմ:

Դիմացի լեռները...

Այո':

Տուները, ծառերը...

Այո', գիտեմ:

Ձկնորսները... յայտէ' Էֆենտի:

Տիկի'ն:

Շատ աղէկ, վերջը կը նստիս:

Յակոբոս աղան կը նստի:

Էֆենտին եթէ հաւանէր պատշգամբ նստիլ Յակոբոս աղային քով, խնդիրը պիտի փակուէր, եւ, հետեւաբար, պիտի գրկուէր այն հաճոյքէն, զոր տան տիկնոջ թախանձանքները կը պատճառէին իրեն: Էֆենտիին փափաքն էր բարձրանալ

շարունակ, ցորչափ պիտի մնար այն սենեակին մէջ, եւ այս միջոցն յարմար դատած էր հասնելու համար իւր նպատակին:

Միւս կողմէն Յակոբոս աղան կը վիրատորուէր, որովհետեւ պարտականութիւն չէր գգար խոնարհիլ ուրիշ մը բարձրացնելու համար եւ անուան մը շնորհատրութեան առթիւ այս եղանակով նուաստանալուն վրայ կը ցաւէր: Այսուամենայնիւ իւր ցաւն ծածկելու կը ջանար եւ կը համբերէր:

Միւս հիւրերուն եւս հաճոյ չէր թուեր տան տիկնոջ եւ Էֆենտիին ընթացքն, եւ կը սպասէին, որ առետուրներուն նուագութեանը եւ օդոյն գեղեցկութեանը վրայ բացուած խօսքն վերջանայ, ու ելնեն, երթան:

Վերջապէս սա պատշգամը քիչ մը չնստեցար, ըսաւ նորէն տիկինը:

Սանկ քիչ մը նստէ՛, տես Վարնայի շոգենան է, որ կու գայ:

Էֆենտին շարժում մ'ըրաւ:

Յակոբոս աղան ոտք ելաւ:

Էֆենտին թիկնոցի ետեւի գրպանէն թաշկինակը հանեց եւ քիթը սրբեց:

Այս էր շարժման պատճառը:

Յակոբոս աղան նորէն նստեցաւ՝ այս անգամ ալ Էֆենտիին քթին զոհուելով:

Այս հարաւային հողմերն ալ չվերջացան, որ հարբուխէ խալսէինք, ըսաւ տան տիկինը. ամէնուս վրայ թուլութիւն մը կայ, սրտի նեղութիւն մը. չելար սա պատշգամը նստելու, որ սիրտդ բացուէր քիչ մը, Էֆենտի՛:

Էֆենտին քիչ մը շարժեցաւ ձեռով մը, որ կարծես կ'ընդունէր տիկնոջ հրաւերը:

Յակոբոս աղան ոտք ելաւ եւ հրամցուց Էֆենտիին:

Չէ՛, չէ՛... սա նասրըս քիչ մը ցաւեցաւ, անոր համար ոտքս սանկ դրի, որ հանգիստ ընեմ:

Յակոբոս աղան դարձեալ նստեցաւ` այս անգամ ալ Էֆենտիին ոտքին գոհուելով:

Ամէնուն քովը հագ մը կայ, մարդ չկայ, որ չհագայ, յարեց տան տիկինը, կուրծքի  
ցաւ ալ կայ... կ'իմանամ, որ ուրիշ հիւանդութիւններ ալ կան եղեր. Էֆենտի',  
պատշգամը անցի՛ր ու ոտքդ երկնցուր քիչ մը:

Յակոբոս աղան երթալու համար ոտք ելաւ եւ գլուխը ծռելով` «ձեր հրամանաւն  
երթանք, տիկի՛ն», ըսաւ:

Նստեցէ՛ք քիչ մը, Յակոբոս աղայ, ինչո՞ւ կ'աճապարէք... գործ ունիք նէ, գոն  
չեն ըներ:

Այո, գործ ալ ունիմ:

Քիչ մ'ալ նստեցէ՛ք:

Քիչ մ'ալ նստիմ, որ քիչ մ'ալ նախատուիմ, ըսաւ ինքնիրեն Յակոբոս աղան եւ  
նստեցաւ:

Յակոբոս աղայ, ի՞նչպէս է մեր պատշգամը:

Շատ աղէկ է:

Ես շատ անգամ հոս կը նստիմ եւ չեն նեղանար... Էֆենտին չախորժիկ կոր:

Էֆենտին կը գգայ, թէ թախանձանաց վերջերն է, որովհետեւ Յակոբոս աղան  
երթալ կ'ուզէ, ուստի որպէս թէ տան տիկնոջ խօսքը չկոտրելու համար՝

Քիչ մը նստիմ սա պատշգամը, որ խօսքը գոցուի, կ'ըսէ եւ կ'երթայ նստելու  
պատշգամն, գոր թողած էր արդէն Յակոբոս աղան:

Ինչո՞ւ կ'երթաք, Յակոբոս աղայ, քիչ մ'ալ նստեցէ՛ք, կ'ըսէ տան տիկինը:

Ոչ, երթամ պիտի:

Կ'աղաչեն, քիչ մ'ալ:

Ձեր հրամանովն երթանք, տիկի՛ն:

Եթէ ստիպողական գործեր ունիք, չեն ստիպեր, որ մնաք:

Այո, ստիպողական գործ ունիմ:

Շատ շատ բարեւներ կ'ընեն...

Գլխուս վրայ...

Ձեր տիկինին...

Ըլլայ:

Ձեր աղջիկներուն:

Շատ աղէկ:

Պզտիկին ալ աչքերը կը համբուրեն:

Շնորհակալ եմ:

Դարձեալ հրամանեցէ՛ք, Յակոբոս աղա՛յ:

Դուք ալ հրամանեցէ՛ք:

Մեզի մի՛ մոռնաք:

Չենք մոռնար:

Տիկինդ ալ մէկտեղ բե՛ր:

Կու գանք:

Տիկինը բեր օր մը, որ քիչ մը պատշգամբ նստի:

Նստի, ( մեկուսի ) որ ինձի պէս խայտառակուի:



Մեր պատշգամբը շատ աղէկ է:

Անանկ է:

Յակոբոս աղան կը մեկնի:

Ինքզինքը փողոց գտնելուն պէս կը սկսի խորհրդածութեանց.

«Քառասուն անգամ ոտք ելնել, քառասուն անգամ նստիլ, որպէսզի Էֆենտին նստի պատշգամբ, պարապ տեղը պզտիկնալ, խոնարհիլ... խայտառակուիլ հիւրերուն առջեւ: Խելք չըրի. առաջին անգամ, երբ տիկինն Էֆենտին պատշգամբ հրամցուց, պատշգամբն իջնելու էի... պզտիկութիւն պիտի ըլլար թէն, բայց գոնէ մէկ անգամ պիտի ըլլար եւ ոչ թէ քառասուն անգամ, որպէս եղաւ: Գետնին տակը անցնէր սա պատշգամբ... Ի՞նչ սորվելիք ունիմ, ի՞նչ շահ ունիմ ես ան Էֆենտիէն, որուն քով ասանկ պզտիկ մնալու ստիպեցին զիս... Ե՛ս ուզեցի պատշգամբ նստիլ. ինքը հրամցուց, ես ալ ընդունեցի. եթէ Էֆենտինն համար պիտի պահէր պատշգամբ, ինչո՞ւ զիս հրամցուց հոն: Բայց տիկինը յանցանք չունի... ի՞նչպէս չունի... ան ալ ունի յանցանք, բայց Էֆենտին է բուն յանցաւորը: Երանելի՛, քեզի պատշգամբ հրամմէ՛ կ'ըսեն կոր, եկուր դուն ալ նստէ, ես ալ նստիմ, լմնայ գործը... զիս քառասուն անգամ խայտառակելու ի՞նչ հարկ կայ: Ասկից վերջը ոչ թէ միայն չպիտի նստիմ պատշգամբ, այլ նաեւ գաւակներուս ալ պիտի կտակեմ, որ հեռու փախչին պատշգամբներէ... շատ դպաւ ինձի այս գործը: Եթէ տուն մ'այցելութեան երթամ, սենեակին դռան քով պիտի նստիմ. պարապ տեղը խայտառակ ըլլալու ժամանակ չունիմ»:

Այցելութեան օրերուն մէջ ենք, սիրելի ընթերցողներ, եւ այս իսկ է պատճառ ներկայ յօդուածիս հրատարակութեան: Զգուշացէք պատշգամ նստելէ. ընտրեցէք ձեզ անանկ տեղ մը, ուսկից արտաքսուելու նուաստութեան մէջ չգտնուիք: Գիտեմ, երբ այլ եւ այլ վիճակի հիւրերով լեցուած սենեակ մը մտնէք, կը շուարիք, կը մնաք եւ չէք գիտեր, ուր նստիլ: Ծերերը չեն յարգուիր, որ տարիքի կարգով նստիք: Խելքն ալ ստակ չընեն, որ խելքի կարգով տեղ մ'ընտրէք: Առաջնութիւնն ոսկոյ կը տրուի, ուստի ոսկոյ թիւերու կարգով տեղ մ'որոշելու աշխատեցէք: Կը տեսնես, որ աղքատ ծեր մը անկիւնը նստեր է, եթէ երկու ոսկի ունիս վրադ, գնա այդ ծերունիին կոնակին վրայ նստէ: Կը պատահի

սակայն երբեմն, ինչպէս արդէն տեսաք, որ ամէնէն հարուստն ամէնէն վար կը նստի դռան քով. վերջէն եկող եւ անկէ նուազ հարուստ մը դռան դռ՞րսը նստի: Ահա ծանր խնդիր մը, որ ամէն տարի այցելութեանց օրերուն մէջ կը յուզուի եւ շատ սխալներով կը լուծուի:

Ըստ մեր խոնարհ կարծեաց՝ միջոց մը կայ միայն, որ այս անպատեհութիւնները կը բառնայ եւ արժանապատուութիւններ վիրաւորելու երկիւղը կը փարատէ:

Ո՞րն է այդ միջոցը:

Այբութենի կարգով նստիլ:

Այսինքն ժամկոչ մը, որուն անունն այբով կը սկսի, իրաւունք պիտի ունենայ վեր նստիլ այն վաճառականէն, որուն անուան սկզբնատառն Բ կամ Գ կամ Դ եւ այլն է:

Այս միջոցը թէպէտեւ քիչ մը ծիծաղաշարժ է, բայց սկզբունքի վրայ հիմնուած է:

\*\*\*

Աթանաս աղան կոշտ մարդ մը ճանչցուած է:

Բայց գիտէ՞ք Աթանաս աղան ինչու համար կոշտ մարդ մը ճանչցուած է:

Աթանաս աղային կոշտ մարդ մը ճանչցուած ըլլալուն գլխաւոր պատճառը սա է, թէ Աթանաս աղան չհաճիր, որ երիտասարդները, մանաւանդ իրեն անձանօթ երիտասարդները չափազանց մտերմաբար վարուին իւր կնոջը հետ եւ յօժարութիւն ունենան ամէն առթիւ ծառայութիւն մատուցանել իւր կողակցին: Պէտք չէ ասկից հետեւցնել սակայն, թէ Աթանաս աղան նախանձոտ է կամ Աթանաս աղան կնոջը հաւատարմութեանը վրայ կասկած ունի. բնաւ երբեք: Աթանաս աղային, վերջապէս, հաճոյ չթուիր, երբ երիտասարդ միւրմէ աւելի անձնանուիրութիւն ցոյց կու տայ իւր տիկնոջը: Պատճա՞ռ: Թերեւս ինքն ալ չգիտեր եւ թերեւս կը վախճայ իսկ պատճառ մը փնտռելու:

Եւ եղաւ, որ գիշեր մը քանի մ'ընտանիքներ այցելութիւն ըրին Աթանաս աղային: Աթանաս աղան, այր հիւրասէր, ընդունեց հիւրերն այն պատուով, որուն արժանի էին: Քանի մը վայրկեան յետոյ դուռը զարնուեցաւ, բացուեցաւ, եւ քսանչորս տարեկան երիտասարդ մը, Աթանաս աղային անձանօթ, ներս մտաւ սենեակէն եւ երկու ծունկերն իրարու կցելով, գլուխը մինչեւ գետինը խոնարհեցնելով՝ բարեւեց ներկաները եւ թիկնաթոռի մը մէջ ընկղմեցաւ՝ ոտք ոտքի վրայ դնելով: Այս երիտասարդն, որպէս վերջէն հասկցուեցաւ, Աթանաս աղային տունն այցելող հիւրերուն միոյն տունը գնացեր էր եւ անկից տեղեկանալով, թէ Աթանաս աղային տունը գնացեր էին, պահապանի մ'առաջնորդութեամբ Աթանաս աղային դուռը զարկեր էր: Գիծ մը քաշենք հոս: Հօրեղբայր մ'ունէի, որ կ'ըսէր. «մարդիկ կան, որ եթէ քիչ մը բարձրէն նուագարանի ձայն մը լսեն, կը հարցնեն. ո՞ր կողմն է երկնից սանդուխը»: Եւ այսօր իսկ շատ կան այս կարգի մարդիկ, որոնց դասուն կը վերաբերէր նաեւ մեր երիտասարդը: Փակենք գիծը: Արդ, հարկ չկայ ըսելու, թէ Միհրան այսպէս կ'անուանուէր երիտասարդը առաջին անգամն էր, որ կը մտնէր Աթանաս աղային տունը, բայց սենեակը մտնելուն պէս այնպիսի եղանակով մը սկսաւ վարուիլ, որ կարծես թէ Աթանաս աղային եւ անոր տիկնոջը հետ քառասուն տարիէ ի վեր կը տեսնուէր: Այսպէս, հագիւ քանի մը վայրկեան մնաց թիկնաթոռի վրայ եւ ահա ոտք ելաւ եւ մօտենալով Աթանաս աղային տիկնոջն, որ աթոռի մը վրայ նստած էր՝

Կ'աղաչեմ, տիկին, ըսաւ, թիկնաթոռի վրայ նստեցէք:

Հոգ չէ, հոս աղէկ եմ:

Տիկին, կ'աղաչեմ:

Շնորհակալ եմ:

Ուտընիդ պագնեմ, խօսքս մի՛ կոտրեր, ձեր փափուկ մարմինը փայտի վրայ հանգչելու սահմանուած չէ:

Պարոն, առաւ անդիէն Աթանաս աղան, տիկինը հոն հանգիստ է, դուք նստեցէք ձեր թիկնաթոռը եւ անհանգիստ մի՛ ըլլաք տիկնոջ համար:

Այո, այո, հոս շատ աղէկ եմ, յարեց տիկինը:

Ոչ, ոչ ըրաւ Միհրան, կարելի չէ, որ հոս թողում գձեգ, եւ Աթանաս աղային կինն թելէն բռնելով առաւ, թիկնաթոռ տարաւ եւ հոն նստեցուց:

Աթանաս աղան չհաճեցաւ այս արարողութեան վրայ, բայց քաղաքավարութիւնը խնդրեց, որ իւր տհաճութիւնն ինքը միայն գգայ ու գիտնայ:

Աթանաս աղան հնազանդեցաւ քաղաքավարութեան եւ բերանը չբացաւ, սակայն կը ջանար հնարք մը գտնել իմանալու համար գոնէ, թէ ով էր այն երիտասարդն եւ ինչու համար եկած էր: Աթանաս աղային այս հետաքրքրութիւնը բարեբախտաբար չուշացաւ փարատուելու: Հիւրերէն տիկին մը տեսնելով, որ Միհրան Աթանաս աղային հետ որպէս ծանօթի մը հետ կը վարուէր, հարցուց անոր.

Միհրանիկ, շատո՞ւնց կը ճանչնար Աթանաս աղան:

Ես չեմ ճանչնար զինքը, պատասխանեց անմիջապէս Աթանաս աղան:

Ես ալ չեմ ճանչնար, յարեց Միհրան, բայց ուրախ եմ, որ ձեր շնորհիւր ճանչցայ: Ձեզի գնացի, տիկին, եւ սպասաւորէն իմացայ, որ հոս եկեր էք, ես ալ եկայ՝ մեր բարեկամներուն բարեկամները մեր ալ բարեկամներն են ըսելով

Աթանաս աղայ, յարեց տիկինը, Միհրանիկը եղբօրս տղան է: Միհրանիկ, Աթանաս աղային հետ եղբօր պէս կը տեսնուինք, տիկինն ալ Աթանաս աղային տիկինն է. ազնիւ տիկին մէ, Աթանաս աղան ալ բարի մարդ մէ:

Շատ աղէկ, պատասխանեց Աթանաս աղան:

Ինքնզինքս բարեբախտ կը համարիմ Աթանաս էֆենտիին եւ անոր տիկնոջը հետ ծանօթանալու համար, ըսաւ Միհրան եւ գրպանէն ծխախոտի տուփն քաշելով՝ սիկարայ մը հրամցուց Աթանաս աղային կնոջը:

Շնորհակալ եմ, չեմ գործածեր:

Տիկին, իմ ծխախոտս առաջին տեսակն է:

Շնորհակալ եմ:

Առէ՛ք, կ'աղաչեմ:

Բայց չեմ ծխեր:

Եթէ կ'ուզէք, ասելի բարակ շինեմ:

Բարակութեան վրայ չէ, սովորած չեմ...

Մի՛ մերժէք:

Չեմ ուզեր:

Չէ մի՛ ըսէք:

Պարոն Միհրան, տիկինը սովորութիւն չունի սիկարայ ծխելու, կ'աղաչեմ, մի՛ ստիպէք զինքը...

Աթանաս աղայ, շատ մեղմ է իմ ծխախոտս. առէք, տիկին, առէք. Աթանաս աղայ, կ'աղաչեմ, հրաման ըրէք ձեր տիկնոջն, որ չմերժէ:

Կարծեմ՝ ըսինք, թէ չգործածեր:

Կը խնդրեմ, ըսէք, որ առնէ, ձեր խօսքը չմերժեր... Ծխախոտս ընտիր է...

մասնատրապէս տիկիններու համար է... անուշ է... կ'աղաչեմ, հրաման ըրէք, որ առնէ:

Տիկինը խնդիրը չերկարելու համար կ'առնէ սիկարը:

Միհրան քիչ մը ներկայից խօսակցութեանը կը խառնուի, յետոյ հայելիին առջեւը կ'երթայ եւ ձեռքով մագերը կը շտկէ: Սենեակին մէջ փոքրիկ պտոյտ մը կ'ընէ՝ Ֆաուսթէն քանի մը կտորներ մրմուլով եւ նորէն կը դառնայ Աթանաս աղային տիկնոջը.

Ա՛հ, տիկին, կ'ըսէ, կարմրցեր էք, եթէ նեղուեցաք, պատուիս մը բանամ:

Հարկ չկայ:

Կաս-կարմիր կտրեր էք, տիկին, կը քրտնիք, վերջը կը մսիք, հիւանդ կ'ըլլաք:

Հոգ մի՛ ընէք:

Չէ, չէ, պիտի բանամ պատուիս մը:

Չուզեր:

Տիկինը նեղութիւն կը զգայ Միհրանին ընթացքէն: Աթանաս աղան, որ բնաւ ունկն չդներ հիւրերու խօսակցութեան եւ միայն Միհրանը կը դիտէ, կը նեղուի նոյնպէս: Բայց ճար չկայ, համբերելու է, մինչեւ որ վտանգն անցնի:

Միհրան կը շարունակէ իւր ընթացքը:

Չըլլա՞յ, որ գլուխնիդ ցաւի, տիկին:

Բան մը չունիմ, ճա՛նքմ:

Քովս աղէկ լաւանտայ ունիմ, տամ քիչ մը ու շփեցէք ձեր ճակատը:

Գլխու ցաւ չունիմ:

Պարոն Միհրան, չգա՞ս քովերնիս նստիլ ու խօսելու, յոգնեցաք պտտելով, կ'ըսէ անդիէն Աթանաս աղան:

Գամ պիտի, տիկինն անհանգիստ է, ու քիչ մը լաւանտայ տամ, կ'ըսեն: Բացէք քիչ մը, տիկին, ձեր թաշկինակը, սանկ քիչ մը դնեն, քանի մը կաթիլ, հոտուրտացէ՛ք, քիչ մ'ալ քիթերնիդ քաշեցէ՛ք: Ասոր հոտը շուտ չելլար, ամիսներով կ'երթայ: Ի՛նչ անտանելի ցաւ է գլխու ցաւն, իմ գլուխս եկած է տէ, գիտեն:

Տիկինն հնազանդելով ակնարկին, գոր Աթանաս աղան ըրաւ իրեն, տեղէն կ'ելնէ ու էրկանը քով կ'երթայ կը նստի:

Ես կ'երթամ, հորաքոյր, ըսաւ Միհրան բարկութեամբ այն կնոջ, որ քիչ մ'առաջ ներկայացուցած էր զինքն Աթանաս աղային:

Ինչո՞ւ:

Վերջը կ'ըսեմ:

Ի՞նչ եղար մէկէն ի մէկ, Միհրանիկ:

Էնսիւթ... Էնսիւթ... ես Էնսիւթի չեմ կրնար դիմանալ:

Ի՞նչ եղաւ, ոտքդ պագնեմ, Միհրանիկ:

Էնսիւթ... Էնսիւթ... եւ կ'ուզեմ, որ դուն ալ հետս գաս... ինձի Էնսիւթ հէ՛լէ... Էնսիւթ հէ՛լէ, ես մարդու գաւակ եմ... Աթանա՛ս աղա... ընկերութեանց մէջ շատ մտած եմ... ինձի հէ՛լէ... Էնսիւթ հէ՛լ է՛... Էնսիւթ հէ՛լէ... հէ՛լէ Էնսիւթ... ինձի... ինձի Էնսիւթ... ինձի պէս մարդու Էնսիւթ... վնաս չունի... ե՛լ, սիրելի հորաքոյրս, երթանք... Էնսիւթ հէ՛լէ... շուտ ըրէ, ինձի հէ՛լէ... շալդ դիր... ինձի Էնսիւթ հէ՛լէ... տուներնիս երթանք վնաս չունի, Աթանա՛ս աղայ...

Ի՞նչ ըրին քեզի, պարոն Միհրան:

Անանկ է եա՛, հասկնանք գործը, ըսին քանի մը գլուխներ, որ քիչ մը ծանր ըլլալ կը թուէին:

Տիկինին լաւանտայ պիտի տայի, որ ճակատը շփէ եւ հոտուրտայ... տիկինը մերժեց եւ ամուսնոյն քովը նստեցաւ... ասկից աւելի ի՞նչ ծանր Էնսիւթ կրնար ըլլալ զգայուն սրտի մը:

Ես ասոր համար չգնացի եւ եթէ լաւանտան մերժեցի, պատճառն այն էր, որ գլխու ցաւ չունէի, պատասխանեց տիկինը:

Տեսա՞ք մի եա, սխալ հասկցողութիւն, Էֆենտիմ:

Շատ սխալ, յարեց Աթանաս աղան՝ միմիայն փակելու համար միջադէպ մը, որուն վրայ բառի մ'արտասանութիւնն իսկ իրեն նեղութիւն կը պատճառէր:

Դուն ալ կը նայիմ, քի խենթ ես, պարոն Միհրան, պոռաց անդիէն հորաքոյրը:

Ամէնքը խնդացին:

Տղա՞յ ես, ի՞նչ ես... Աթանաս աղան անանկ մա՞րդ է... տիկինն էնսիւթ ընող կնի՞կ է... խումրիի պէս կենճ է նէ... բերան ունի, լեզու չունի... թոա՞ֆ տղայ մ'ես... հայտէ ելէք, քատրիլ մը դարձուցէք:

Անանկ է նէ, ներումն կը խնդրեմ. ես, շիտակը, հասկցայ, որ Աթանաս աղան աչք ըրաւ, ու տիկինն ալ քովէս ելաւ:

Հայտէ, ելէ՛ք, քատրիլ մ'ըրէք:

Միհրան կ'ընտրէ իւր պարուհին եւ կը յայտնէ գայն.

Մատամ Աթանաս իմ տամաս է:

Դարձեալ կրճտումն ատամանց Աթանաս աղայի: Կը սկսին քատրիլի : Աթանաս աղան մէկ անկիւն քաշուած՝ Միհրանին ոտներուն ու ձեռներուն շարժմանցը կը հետեւի աչքերով: Քատրիլին բոլոր ձեւերը կը կատարուին, կը սպառին: Միհրան կը ստեղծէ նորանոր ձեւեր, որոց տրամադրութեան համեմատ քաւալիւնները տամաններուն հետ անանկ շղթաներ կը կազմեն, որ աղէկ տպաւորութիւն չեն ըներ Աթանաս աղային վրայ: Շղթաներն երթալով կ'երթան եւ կնճռալի երեւոյթ մը կ'առնեն: Աթանաս աղան հաճոյք չգգար այն շղթաներէն, բայց հաճոյք չգգալը չկրնար յայտնել՝ վախճալով, որ էնսիւթ մ'ալ ըրած կ'ըլլայ, բայց հաճոյք չգգալն ալ չուզեր շարունակել, ուստի պարողներուն ուղղելով խօսքը կ'ըսէ.

Չյոգնեցա՞ք, չյոգնեցա՞ք, հիւանդ պիտի ըլլաք, եկէք նստեցէք, քիչ մ'ալ խօսինք: Քատրիլն ալ բան մ'ըլլայ պարէ:

Մենք չյոգնեցանք, չյոգնեցանք, կը պատասխանեն:



Ան ձեւերն հեռուանց շատ տձեւ կ'երեւան կոր, քատրիլի չեն նմանիր կոր...  
թելերնիդ պիտի ցաւցնէք... այսչափ խաղացիք, հերիք է... կենէ դուք գիտէք,  
ամա...

Աթանաս աղայ, անհոգ եղիր, մենք չենք ցաւցներ, չենք ցաւցներ մենք:

Քրտնեցաք, վերջը պիտի մսիք:

Չքրտնեցանք, չենք մսիր:

Աթանաս աղան նկատելով, թէ չյաջողեցաւ այս հնարքը, հրաման կ'ընէ, որ  
քոնեաք բերեն: Քոնեաքը կը բերուի:

Մէյ-մէկ քոնեաք խմեցէք:

Պարողներն նախ կը մերժեն եւ ապա, Աթանաս աղային թախանձանաց վրայ,  
կ'ընդունին քոնեաքը, եւ այս եղանակաւ կը վերջանայ պարը: Պարը կը  
վերջանայ, բայց Աթանաս աղան «անձրեւէն փախչիմ» ըսելով՝ կարկուտի կը  
բռնուի: Միհրանն Աթանաս աղային տիկինը թելը կ'առնէ, ու կը սկսին սրահի մէջ  
ճնմել: Աթանաս աղան կը կանչէ տիկինը: Միհրան թող չտար՝ առարկելով, թէ  
քաւալիէի մը նուիրական պարտականութիւնն է իւր տաման պտտցնել, զի մի՛  
քրտինքն պաղի եւ հիւանդութիւն բերէ: Միհրան քառորդի մը չափ պտտելէն  
յետոյ Աթանաս աղային տիկնոջը հետ՝ թիկնաթոռի մը վրայ կը նստեցնէ զայն եւ  
իրար կ'անցնի մուշտակ մը գտնելու եւ տիկնոջը կոնակը դնելու համար:

Քիւրք մը, քիւրք մը, պզտիկ քիւրք մը... տիկինը չմսի... Աթանաս աղայ, տիկնոջ  
քիւրքն ո՞ւր է...

Մենեակը տաք է, կը պատասխանէ Աթանաս աղան:

Ի՞նչպէս տաք... չըլլար, էֆենտիմ, չըլլար... իմ բարտըսիս բերեմ... եւ իւր  
թիկնոցը կը բերէ:

Չեմ ուզեր, չեմ ուզեր, կ'ըսէ տիկինը:

Կ'աղաչեմ, տիկին, պարէ յետոյ զգուշութիւններ պէտք է... Ի՞նչ վնաս ունի... սանկ քիչ մը շարժեցէք, որ դնեմ կոնակնիդ:

Թող մնայ, չուգեր, շնորհակալ եմ:

Միհրան մտիկ չըներ, իւր կամք կը կատարէ:

Աթանաս աղան չգիտ է ր, ինչպէս մեկնել Միհրանին այս վարմունքը: Կը խորհի, կը դատէ, կը տրամաբանէ, բայց չուգեր եզրակացութիւն մը հանել:

Մեկնելու ժամը կու գայ: Հիւրերն ոտք կ'ելնեն, մնաք բարովները, մեզի ալ հրամանեցէք ները իրարու կը յաջորդեն: Ասդին ալ Միհրան Աթանաս աղային տիկնոջը ձեռքն ափին մէջ առած կը թօթուէ ու կը թօթուէ գայն՝ հագար ու մէկ յարգանքներ արտայայտելով տիկնոջ:

Շատ երջանիկ եղայ՝ զձեզ ճանչնալու պատիւը վայելելուս համար, ո՛ր էր, թէ շատոնց ճանչցած ըլլայի զձեզ, տիկին, որ գեղեցիկ սեռին մէջ կը փայլիք, որպէս ական պատուական, կը յուսամ, թէ այսուհետեւ յաճախ զձեզ տեսնելու բարեբախտութիւնը չպիտի զլանաք ինձ... դուք ալ հրամանեցէք հօրաքրոջս տունը... ժամանակ կ'անցնենք... միջադէպին համար ձեր ներողութիւնը կը խնդրեմ... վերստին տեսնուինք. եթէ լաւանտան հաւնեցաք, լաւանտային շիշը հոս թողում... բայց չէ, ուրիշ մը կ'առնեմ ձեզի համար... մնաք բարով... մեծապէս գոհ եմ այս գիշերուան զբօսանքէ... ներեցէք, եթէ պակասութեան մը մէջ գտնուեցայ... մնաք բարով... կը սպասենք ձեզի... հրամանեցէք... կեցէք բարեալ...

Հիւրերը կը մեկնին, ինչպէս նաեւ Միհրան:

Աս ի՞նչ պուլաշըխ գեւգեկ է եղեր, կ'ըսէ Աթանաս աղան տիկնոջը՝ հիւրերուն մեկնելէն ետքը:

Դուն ալ կը նայիմ, որ թոհաֆ մարդ մ'ես. պուլաշըխ է նէ, մեզի ի՞նչ. պոշ բաներու համար սիրտ կը հասցունես:

Ըրածները վայրո՞ւն բաներ էին:

Է, ի՞նչ ըրաւ շոճուիւր, գլուխնուս ելաւ, նստեցա՞ւ. քիչ մը գեւգեկ է եղեր, ի՞նչ ընենք:

Կը նեղուիս կոր տէի, բարկացայ ես:

Է, քիչ մը նեղացայ առջի բերան, բայց վերջը վարժուեցայ:

Ոչ խիստ ունի, ոչ ամօթ:

Խիստի, ամօթի բան չկայ հոս. չեմ հասկնար, ինչու այսչափ կը բարկանաս:

Անոր համար բարկացայ, որ քեզի սըխընթը կու տար կոր... չէ նէ, ինչուս պէտք իմին... բայց կը վայլէ՞, որ երիտասարդ մը ուրիշի կնոջը հետ այսչափ թերլիֆսիզ տեսնուի... տեսնողները ծուռ մտքի կը տանին. ես ալ եթէ ուրիշի մը կնոջ հետ անոր այսպէս վարուիլը տեսնամ, ի՞նչ մեղքս պահեմ, կը գայթակղիմ...

Պարէ տղան մտքէն անցունէ անանկ բան մը...

Սանքի ուրիշի կնոջ մը հետ այսպէս վարուիլը տեսնամ նէ, կ'ըսեմ կոր ես, դուն չհասկցար... բայց ինչ որ ալ ըլլայ, վայլուն բան չէ:

Պոշ խօսքե՛ր...

Աթանաս աղան խնդիրը փափուկ կը գտնէ եւ կը լռէ:

Հետեւեալ գիշերն Աթանաս աղան եւ իւր տիկինը կ'ընթրէին: Յանկարծ Միհրան երեւցաւ անոնց:

Բարիկուն, տիկին, բարիկուն, Աթանաս աղայ, ձեզի տեսնելու համար եկայ. այս գիշեր հօրաքրոջս տունը պիտի երթանք՝ քիչ մը ժամանակ անցունելու:

Շնորհակալ եմ, բայց ժամանակ չունիմ այս գիշեր, պատասխանեց Աթանաս աղան:

Անկարելի է, մինչեւ որ ձեզի չառնեմ, չեմ երթար:

Սարսափելի սանձի մը ունիմ:

Ատ ուրիշ:

Այո՛, սարսափելի սանձի մը:

Իրաւունք ունիք:

Այո՛, սարսափելի սանձի մը:

Ատոր ըսելիք չունիմ:

Այո՛, սարսափելի սանձի մը. ի՞նչ է, չիյտեմ:

Հանգիստ ըրէք ուրեմն այս գիշեր:

Այո՛, սարսափելի սանձի մը, նստելու իսկ ժամանակ չունիմ, երթամ պառկիմ  
պիտի, սարսափելի սանձի մը:

Գացէք, պառկեցէք, ես տիկինը կ'առնեմ, կը տանիմ, հոգ մի՛ ընէք, վերջն ալ կը  
բերեմ. Աթանաս աղայ, դուն հանգիստդ նայէ:

Ան ալ չկրնար գալ, ան ալ սարսափելի գլխու ցաւ ունի:

Դուրս ելլալուն պէս գլխու ցաւը կ'անցնի:

Չանցնիր:

Տիկինը ձեռնպահ է:

Գոնէ տիկինն առնեմ, տանիմ պիտի:

Չըլլար:

Իլլեքի պիտի տանիմ, որոշուած է: Կը սպասեն կոր նէ...

Խիկարի էջերն չեն բաւեր, եթէ պատմել սկսինք Միհրանին թախանձանքը, Աթանաս աղային բարկութիւնն եւ տիկնոջն անտարբերութիւնը. ուստի փութանք յայտնելու, թէ Աթանաս աղան ճարահատեալ ստիպուեցաւ համակերպիլ Միհրանին հրամանաց: Միհրան մեծ փոյթ եւ եռանդն ցոյց տուաւ, Աթանաս աղային տիկնոջ թուալեթի միջոցին ետեւէն հայելի բարձրացուց, վերարկուն բռնեց, որ հագնի, կօշիկները հագցուց եւ անոնց խրացքը կապեց: Աթանաս աղան չճաթեցաւ: Միհրան փողոցն ալ մեծ հոգ տարաւ, որ տիկինը ցեխոտ տեղեր չկոխէ, շատ անգամ թելը մտաւ, քանի մ'անգամներ ձեռքէն բռնեց ու ջուրերու հոսանքէն անցուց՝ ցատկեցնելով զայն: Աթանաս աղան ալ ինքզինքը հոսանքի տուած կը հետեւէր անոնց՝ իւր անձին երեք քառորդն ուտելով: Վերջապէս հասան Միհրանին հօրաքրոջը տունը, Միհրան ուզեց Աթանաս աղային տիկնոջ լաստիքները հանել:

Ի՞նչ կ'ընէք, պարոն Միհրան, թող տուէք, որ հանէ լաստիքները, զահմեթ մի՛ ընէք, շնորհակալ ենք, ըսաւ Աթանաս աղան՝ վերջին բառերը շեշտելով:

Ի՞նչ վնաս ունի, Էֆենտիմ, մեր պարտականութիւնն է:

Բնաւ ձեր պարտականութիւնը չէ, կ'աղաչեմ, ինքը թող հանէ:

Տիկինը հանեց լաստիքներն, ու վեր ելան:

Տան տէրերն ու հիւրերը բարեւներ փոխանակեցին իրարու հետ, յետոյ սկսան խօսակցիլ այլ եւ այլ նիւթերու վրայ, քանի մը տիկիններ եւ օրիորդներ բամբասեցին, յետոյ քիչ մ'երգեցին, քիչ մ'ալ պարեցին Աթանաս աղային տիկինը չպարեց եւ վերստին սկսան խօսակցութեան: Պէտք չէ մոռնալ սակայն, թէ Միհրան մերթ ընդ մերթ Աթանաս աղային տիկնոջ քով կ'երթար եւ ձեռներն շփելով այնպիսի շարժումներ կ'ընէր, որք կրնային թարգմանուիլ այսպէս. «Պատրաստ եմ ձեզի ծառայելու»: Տիկինն ալ ժպիտով մը կը պատասխանէր. «պէտք չունիմ ձեր ծառայութեան: Իրերն այսպէս կը շարունակուէին, երբ յանկարծ պզտիկ միջադէպ մը իրաց վիճակը ծանրացուց:

Միհրանին հօրաքոյրն, որ Միհրանին քով նստած էր բազմոցի մը վրայ, հրաւիրեց Աթանաս աղային տիկինն, որ իւր քովը նստի: Տիկինն ընդունեց

հրաւերը, բայց տեղը քիչ մը նեղ էր: Ամուսիններ կան, որ չեն ուզեր իրենց կանանց նեղ տեղեր նստիլը: Ուստի՝

Անհանգիստ եղաք հոն, պարոն Միհրան, պոռաց Աթանաս աղան տեղէն ելնելով, եկէք իմ տեղս նստեցէք:

Կ'աղաչեմ, Աթանաս աղայ, ոտքդ պագնեմ, արեւոյ սիրեմ, անհանգիստ չեմ, շատ աղէկ եմ հոս, նստեցէք տեղներնիդ:

Իրաւ, նեղեցի գձեց, պարոն Միհրան, յարեց Աթանաս աղային տիկինը:

Ամենեւին, Աստուած վկայ, որ չնեղեցիք ինձի, հօրս հոգւոյն վրայ կ'երդնում, որ շատ հանգիստ եմ, կ'ե նճութեանս խէրը շտեսնամ, թէ որ հանգիստ չեմ, ինչո՞ւ պարապ խօսքեր կ'ընէք: Աստուածդ սիրես, նստէ տեղդ, Աթանաս աղայ, չէ նէ, մէյ մ'ալ երեսդ չեմ նայիր:

Ինչո՞ւ սիրտ կը հատցնէք, Աթանաս աղայ, նեղուի նէ, թող ելլայ, տղայ չէ եա՛:

Իրաւ որ նեղեցի, ես կ'ելլամ, ըսաւ Աթանաս աղային կինն ու ելաւ Էրկանը քով նստաւ:

Տեսա՞ք մի, դարձեալ Էնսիւթ, Էնսի՛ւթ է այս ինձի, պոռաց Միհրանը:

Աթանաս աղայ, իրաւ որ այս քիչ մը Էնսիւթ է, կրկնեցին քանի մը տիկիներ:

Էնսիւթի ի՞նչ կայ, հարցուց Աթանաս աղան:

Ի՞նչ Էնսիւթ, կրկնեց Աթանաս աղային տիկինը:

Մենք գիտենք եա՛, բայց մեր տունը պատուաւոր է...

Քանաբէի վրայ երեք հոգի նստեր էին, տեղ չկար, տիկինը մագ մնաց, որ Միհրանի ծունկին վրայ պիտի նստեր եւ նեղէր պիտի տղան:

Թող նեղէր, քեզի չպիտի նեղէր ա՛, անոր ծունկին վրայ պիտի նստեր, տղայ չէր ա՛, թող ելնէր, թէ որ ծունկը ցաւէր... ասանկ բաներ չվայելէր, Աթանաս աղայ,

ձեր ըրածն ամենուս ալ կը դպչի, ներեցէք:

Բայց բան մը չըսինք, կարծեմ:

Կարծեմ, թէ Էնսիւթի բան մը չեղաւ, ըսաւ Աթանաս աղային տիկինն՝ ուժ տալով իր Էրկանը:

Եթէ չըրիք, կու գար նորէն քովս կը նստիք, որ մենք ալ հասկնանք, թէ Էնսիւթ ըրած չէք, ըսաւ Միհրանին հօրաքոյրը:

Հարկ չկայ, ա՛լ երթանք պիտի:

Տիկին, քիչ մը նստեցէք, որ սա խօսքը գոցուի:

Տիկինը կ'երթայ, քանի մը վայրկեան կը նստի՝ այս անգամ Միհրանին հօրաքրոջը տալով մարմնոյն ծանրութեան մեծ մասը:

Այսչափ ալ լրբութիւն կենացս մէջ տեսած չունէի, ըսաւ Աթանաս աղան ինքնիրեն:

Էնսիւթի խնդիրն ալ վերջացաւ, ըսաւ Միհրան եւ տեղէն ելաւ:

Քանի մը տիկիններ իրարու փսփսացին.

Աթանաս աղային համար կոշտ է կ'ըսեն նէ, իրաւունք ունին եղեր:

Է՛հ, երթանք, ըսաւ Աթանաս աղան եւ ոտք ելաւ:

Տիկինն ալ մնաք բարովները լմնցուց, եւ Էրիկ կնիկ դուրս ելան:

Տեսա՞ր մի խայտառակութիւնը:

Ինչո՞ւ պէտք:

Վրան նստելու պէս կ'ընես կոր տէ, տեղէն չերերար կոր սրիկան:

Չէ՛, ճանըմ, չէ՛, սրիկայ չէ, միամիտ է:

Միամիտ է մի, լիրբին մեկն է:

Տեսա՞ր, որ անանկ չէ գործը:

Անանկ չէ տէ, ի՞նչպէս է գործը:

Ատ գեղեկին ո՞վ կարեւորութիւն կու տայ. գացի նստեցայ, շրջագգեստս ծունկին դպաւ քիչ մը, ի՞նչ վնաս ունի, ով կը սեպէ ան թեթելը. բայց դուն մեկէն ի մեկ խոյլանմիշ կ'ըլլաս, պարապ տեղը խօսք կը հանես:

Միամիտ է եղեր...

Միամիտ է եա՛:

Ես անանկ միամտութենէն չեմ ախորժիր եւ մէյ մ'ալ դուռ չեմ բանար այդ անառակին:

Արդարեւ, կան կանայք, որ միամտութեան կը վերագրեն ամէնէն ասելի յստակ եւ գուտ անառակութիւնները, բայց Աթանաս աղային տիկինն կանանց այդ դասուն չվերաբերիր, միայն թէ առանց գիտնալո՜ւ թեթել հաճոյքներ կը պատճառէ երբեմն ուրիշներուն, բայց երբ համոզուի, թէ դիմացինին միտքը ծուռ է, անմիջապէս կը սկսի զգուշանալ, որպէս այս անգամ կը համաձայնի Աթանաս աղային՝ իւր տանը դռները փակել Միհրանին, որ դեռ կը շարունակէ շաբաթը երկու երեք անգամ անոնց դուռը զարնել: Աթանաս աղան որոշած է, կ'ըսեն, Միհրանին գլուխն ի վար ջուր թափել պատուիանէն, եթէ օր մ'ալ իրենց դուռն ափ առնէ: Եւ տուշը ոչ էնսիւթ է եւ ոչ ալ քաղաքավարութեան հակառակ: